ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԾԱՆՈՒՑՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ COVID-19 ՀԱՄԱՎԱՐԱԿԻ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԲԱՐՁՐԱՑՈՒՄ. ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԻՑ ԱՌԱՋԱՑՈՂ ՍՊԱՌՆԱԼԻՔԻ ՀԱՅՏՆԱԲԵՐՈՒՄ ԵՎ ԱՐՁԱԳԱՆՔՈՒՄ

Հայաստանի Հանրապետությունը դրամաշնորհ է ստացել Կայունացման և զարգացման եվրասիական հիմնադրամի միջոցներից (ԿԶԵՀ)՝ 3.000.000,00 (երեք միլիոն) ԱՄՆ դոլար գումարի չափով, «Հայաստանի Հանրապետությունում COVID-19 համավարակի պատրաստվածության մակարդակի բարձրացում. կորոնավիրուսից առաջացող սպառնալիքի հայտնաբերում և արձագանքում» Ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) հետ կապված ծախսերը ֆինանսավորելու նպատակով և մտադիր է վերոնշյալ դրամաշնորհի մի մասն ուղղել Ծրագրի շրջանակներում գնվելիք ապրանքների, աշխատանքների, ոչ-խորհրդատվական և խորհրդատվական ծառայությունների վճարումները կատարելու համար: Ծրագիրը համաֆինանսավորվելու է Հայաստանի Հանրապետության Կառավարության կողմից:

Ծրագիրը ներառում է հետևյալ բաղադրիչները՝

Բաղադրիչ 1. Վարակի կանխարգելման և վերահսկման արդյունավետության բարձրացում

Աշխատանքների գնում.

- ✓ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ-առևտրային կազմակերպության «Արարատ» մասնաճյուղի վերակառուցման աշխատանքներ,
- ✓ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ-առևտրային կազմակերպության «Արմավիր» մասնաճյուղի վերակառուցման աշխատանքներ:

Ապրանքների գնում.

- ✓ Հատուկ բժշկական սարքավորումների և բժշկական կահույքի գնում «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ-առևտրային կազմակերպության «Արարատ» մասնաճյուղի համար,
- ✓ Հատուկ բժշկական սարքավորումների և բժշկական կահույքի գնում «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ-առևտրային կազմակերպության «Արմավիր» մասնաճյուղի համար:

Խորհրդատվական ծառայությունների գնում.

- ✓ Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոնի Արարատի և Արմավիրի մարզային մասնաճյուղերի վերակառուցման աշխատանքների նախագծում և հեղինակային հսկողություն,
- ✓ Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոնի Արարատի և Արմավիրի մարզային մասնաճյուղերի վերակառուցման աշխատանքների որակի տեխնիկական վերահսկողություն:

Բաղադրիչ 2. Վարակիչ հիվանդությունների դեպքերի վարման համակարգի հզորացում

Աշխատանքների գնում.

- ✓ ՀՀ Լոռու մարզի Վանաձոր քաղաքում «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի նոր ինֆեկցիոն կենտրոնի մասնաշենքի կառուցման աշխատանքներ:

Ապրանքների գնում.

- ✓ Հատուկ բժշկական սարքավորումների, բժշկական կահույքի և պարագաների գնում ՀՀ Լոռու մարզի Վանաձոր քաղաքում «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի նոր ինֆեկցիոն կենտրոնի մասնաշենքի լաբորատորիաների և ինտենսիվ թերապիայի ծառայության համար:

Խորհրդատվական ծառայությունների գնում.

- ✓ ՀՀ Լոռու մարզի Վանաձոր քաղաքում «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի նոր ինֆեկցիոն կենտրոնի մասնաշենքի կառուցման աշխատանքների նախագծում և հեղինակային հսկողություն,
- ✓ ՀՀ Լոռու մարզի Վանաձոր քաղաքում Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի նոր ինֆեկցիոն կենտրոնի մասնաշենքի կառուցման աշխատանքների որակի տեխնիկական վերահսկողություն:

Բաղադրիչ 3. COVID-19-ի մասին բնակչության եւ բժշկական անձնակազմի շրջանում հանրային իրազեկման բարձրացում

Խորհրդատվական ծառայությունների գնում.

- ✓ Հանրային իրազեկման ռազմավարության մշակում, աջակցություն ծրագրի իրազեկման միջոցառումներին, ներառյալ քաղաքացիների ներգրավման գործընթացը,
- ✓ COVID-19-ով հիվանդների վարման վերաբերյալ բժշկական անձնակազմի վերապատրաստման դասընթացների կազմակերպում:

Ոչ-խորհրդատվական ծառայությունների գնում.

- ✓ Հանրային իրազեկման ռազմավարության իրականացում, աջակցություն ծրագրի իրազեկման միջոցառումներին, ներառյալ քաղաքացիների ներգրավման գործընթացը:

Բաղադրիչ 4. Ծրագրի կառավարում

Խորհրդատվական ծառայությունների գնում.

- ✓ Ծրագրի ֆինանսական աուդիտ,
- ✓ Այլ խորհրդատվական ծառայություններ:

Դրամաշնորհից ֆինանսավորվող պայմանագրերի գնումներն իրականացվելու են համաձայն ԿԶԵՀ ֆինանսավորմամբ իրականացվող ծրագրերի Գնումների Քաղաքականության (2018թ. նոյեմբեր) և ԿԶԵՀ ֆինանսավորմամբ իրականացվող ծրագրերի Գնումների Ընթացակարգերի (2018թ. նոյեմբեր), որոնք հրապարակված են Եվրասիական Զարգացման Բանկի՝ ԿԶԵՀ-ի միջոցների Կառավարչի, կայքում:

Գնումների հատուկ ծանուցումները միջազգային մրցույթ (ICB) գնումների վերաբերյալ, ինչպես նաև Հետաքրքրության հայտ ներկայացնելու հրավերները՝ խորհրդատվական

ծառայությունների մատուցման համար, կհրապարակվեն ՄԱԿ-ի Զարգացման Բիզնես Development Business (UNDB) առցանց հարթակում, ինչպես նաև Եվրասիական Զարգացման Բանկի՝ ԿԶԵՀ-ի միջոցների Կառավարչի, Հայաստանի Հանրապետության Ֆինանսների նախարարության՝ www.gnumner.am, և Հայաստանի Հանրապետության Առողջապահության նախարարության «Առողջապահական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի՝ www.healthpiu.am, պաշտոնական կայքերում:

Գնումների հատուկ ծանուցումները ազգային մրցույթ (NCB) գնումների վերաբերյալ, ինչպես նաև գնանշման հարցման ընթացակարգով իրականացվող գնումները կհրապարակվեն Հայաստանի Հանրապետության Ֆինանսների նախարարության՝ www.gnumner.am, և Հայաստանի Հանրապետության Առողջապահության նախարարության «Առողջապահական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի՝ www.healthpiu.am, պաշտոնական կայքերում:

Գնումների հատուկ ծանուցումները ազգային մրցակցային ընթացակարգով գնումների վերաբերյալ, ինչպես նաև գնանշման հարցման ընթացակարգով իրականացվող գնումները՝ ներառյալ մրցույթային փաստաթղթերը, հրապարակվում են ARMEPS գնումների էլեկտրոնային համակարգի www.armeps.am կայքում հայերեն լեզվով, իսկ հայտերը ներկայացվում են միայն գնումների էլեկտրոնային համակարգի միջոցով:

Այն մատակարարներն ու կապալառուները, որոնք ցանկանում են ստանալ Գնումների հատուկ ծանուցումները միջազգային մրցակցային ընթացակարգով, ազգային մրցակցային ընթացակարգով և գնանշման հարցմամբ իրականացվող գնումների վերաբերյալ, ինչպես նաև այն խորհրդատուները, որոնք ցանկանում են ստանալ Հետաքրքրության հայտ ներկայացնելու հրավերները կամ ցանկանում են լրացուցիչ տեղեկատվություն ստանալ, կարող են կապվել ներքոնշյալ հասցեով՝

ՀՀ Առողջապահության Նախարարության «Առողջապահական ծրագրերի իրականացման գրասենյակ» Պետական Հիմնարկ
պրն. Երվանդ Էլիբեկյան, Տնօրեն
Կոմիտասի 49/4, ք. Երևան, 0051, ՀՀ
Հեռ. (+374 10) 29 75 36, (+374 10) 29 75 37
Էլ. Փոստ՝ info@healthpiu.am, kristine.ghambaryan@healthpiu.am
www.healthpiu.am